ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 12

28/02/2018

ԱՍՏՂԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 28-ՐԴ ՓՈՂՈՑ
1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ
ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի , ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով , հաշվի առնելով Աստղաձոր համայնքի ղեկավարի 27.02.2018թ. թիվ ԱԳ-109 գրավոր առաջարկությունը և քաղաքացի Արմեն Լերմոնտովի Գևորգյանի 27.02.2018թ. համաձայնագիրը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Աստղաձոր համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքային սեփականություն հանդիսացող 28-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 1 հասցեում գտնվող 088-001 կադաստրային ծածկագրով 0.0178 հա հողամասը և դրա վրա համայնքի բնակիչ Արմեն Լերմոնտովի Գևորգյանի կողմից կառուցված 45.9 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու կառուցապատողին:

2. Համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 35-րդ հոդվածի դ. և ե. ենթակետերի ուղղակի վաճառքի գինն է 45.9x10000x0.055=25245 դրամ ավտոտնակի արժեքով և 0.0178x2220000=39516 դրամ հողամասի արժեքով , ընդամենը՝ 64761 դրամ:

3. Հողամասը և ավտոտնակը գտնվում են գ. Աստղաձոր 28-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 1 հասցեում:

4. Հողամասի ծածկագիրն է 05-013-0088-0001

5. Հողամասի մակերեսը՝ 0.0178 հա

6. Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

7. Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

3. ԴԱՎԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ

4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌԱՖԻԿ

6. ԿՆՅԱԶՅԱՆ ԳԱԳԻԿ

7. ՄԿՈՅԱՆ ՎԻԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**